պէս ասում են իրենք ռուսները, «ուր աչքերն են նայում»:

Երկարաքղանց մի կապայ կամ մուշտակը հագին, մէջքը պարանով սղմած, երկարավիզ թանձր կօշիկները մինչեւ ծնկները քաշած, գլխարկը մինչեւ ականջները, անորոշ հայեացքը դէպի հեռուն, դէմքն անյոյզ ու հանդարտ, որպէս ուխտաւոր, ահագին գաւազանը ձեռքին, մէջքին մի պարկ, որ պարունակում է բոլորն ինչ նա ունի, այս մարդը քայլում է տարածութեան մէջ այնպէս, ասես նա էլ երբեք կանգ առնել չի կարող, ու դատապարտուած է քայլել յաւիտեան:

Մի հարցնէք, թէ ո՞ւր է գնում, իր նպատակը միայն ինքը գիտէ, եւ աշխարհը երբեք չի հասկանայ այն:

Դաշտերով, հողերի հետ, լռութեան մէջ, կամ արեւի տակ աննպատակ քայլելու գերագոյն հաճոյքը միայն ռուս մարդը գիտէ:

Նա քայլում է ասես աշխարհից դուրս, մինչ դուցէ մի նոր աշխարհ գտնելու անգիտակից մղումով, որովհետեւ իրենը շատ է տաղտուկ ու մխակերպ:

Ու մի հարցնէք, թէ ի՞նչ է տեսնում: Նա ոչինչ չի տեսնում: Նա միայն քայլում է, առանց յետ նայելու:

Մի՛ հարցնէք նաեւ, թէ ի՞նչ է թողել իր յետեւում:

Ոչինչ չի թողել:

Փայտաշէն խրճի՞թ:

Մի օր կայ, միւս օրը ուրագանը կը սրբի երկրի երեսից, որպէս տաշեղ:

Փայտաշէն ու խարխլած եկեղեցի՞, այն էլ եթէ եղել է, վաղուց էր ճռճռում քամիների շնչի տակ եւ մի օր հրդեհը լափեց, ռուսական հրդեհը, որ մի քանի ժամում մի ամբողջ գիւղ է լիզում ու մոխիրի վերածում:

Գերեզմանատո՞ւնը... քար ու յիշատակութիւն չկայ այնտեղ. երէկ թաղուած սիրելիների հողաթումբը այսօր արդէն հարթ է եւ փայտէ փոքրիկ խաչը շատ շուտ է ծռւում ու գետին փռւում:

Մնում է հո՛ղը, հո՛ղը...որի աղաղակը ռուսական ամբողջ պատմութիւնն է բռնել: Հողը, որ տնքաց ու տառապեց ճորտութեան ծանրութեան տակ մինչեւ որ եղբայրացաւ ազատութեան հետ:

Ջեմլեա ի վոլիա, հողն ու ազատութիւնը դարձան ռուս մարդու երկու շղթայուած աստուածութիւնները, որ պէտք էր փրկել:

Բաղխուեց նրանց փրկելու համար, արիւնոտուեց ու ընկաւ իր կողի վրայ:

Ո՞ւր է ազատութիւնը:

Հող ամէն տեղ կայ անծայրածիր Ռուսիայում— Սեւ ծովի ափերից մինչեւ Սիբիր, ամէն տեղ հատիկ փուխր, անձրեւն ու Աստուած մի կտոր հաց կը տան: Ազատութի՞ւնը...

Նա դարձեալ չկայ, չկայ...

Քայլի՛ր, քայլի՛ր, այսպէս ազատ ես հովերի հետ:

Քայլի՛ր, մինչեւ ուժասպառ ընկնես մի տեղ եւ գլուխդ մայր երկրի կրծքին դնես...

... էխ...

Անհուն մի տնքոց, ռուս մարդի տնքոց, որ ցաւ էլ չունի. հողմի մռնչիւն է այդ էխ-ը, խուլ արձագանքը ներսից վայող հոգու, ու ժխտումը սեփական էութեան: Էխ, մի ձեռք անյուսօրէն բարձրացաւ օդի մէջ, ցնցուեց ու վար ընկաւ:

Քայլող ռո՛ւսը...

Նա քայլելով է տիրել գրեթէ կէս Եւրոպան եւ կէս Ասիան, ինքն էլ չիմանալով, թէ ինչո՞ւ է տիրում:

Եւ յաճախ ինքն էլ չը գիտէ, թէ ի՞նչ ունի. անեկդոտ է հետեւեալը, բայց որքան բնորոշ ռուս հոգեբանութեան համար:

Ասում են, որ ռուս-ճապոնական պատերազմին ռուս զնդերը արեւմտեան սահմաններից շարժւում են դէպի Միջին Ասիա, դէպի Մոնղոլիա, Չինաստան, Վլադիվոստոկ: Ճամբան անծայր է. անցնում են նահանգ նահանգի յետեւից, անցնում են անծանօթ վայրերով եւ երբ հարցնում են, թէ ո՞ւմ են պատկանում այս հողերը, պատասխանը լինում է միշտ նոյնը.

— Ռուս ցարին:

— Ապա էլ ինչո՞ւ ենք մենք կռուի գնում, երբ այս բոլորը մերն է, հարցնում են խեղճ զինուորները:

Հարցնում են, բայց գնում են: